ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/07

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ա. Սարգսյանի (լիազորագիր տրված՝ 21.01.2021թ.),

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝

Կ.Դրամբյանի (լիազորագիր տրված՝ 22.01.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.01.2021թ. թիվ 26/26-1/219-2021 գրությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 29.12.2020թ. թիվ 08-505 գրության հիման վրա 13.01.2021թ. թիվ 26/26-1/219-2021 գրությամբ նախաձեռնել է «Մեգիէլ» ՍՊԸ-ին

(հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Մեգիէլ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարության գրության հիման վրա «Մեգիէլ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ հարուցելու վերաբերյալ հայտնում ենք, հետեւյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն օրենքի նպատակն է ի թիվս այլի՝ գնումների եւ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ եւ օգտավետ իրականացումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային եւ ոչ խտրական հիմունքներով կազմակերպում. ……

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով:

Օրենքը և ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշումը (հետայսու՝ նաև Կարգ) չի նախատեսում այնպիսի իրավական կարգավորում, որ պատվիրատուն իր աշխատակցին կամ ենթակայության տակ գտնվող ստորաբաժանմանը դիմի եզրակացություն տալու նպատակով:

Այսինքն գնահատող հանձնաժողովը կատարել է գործողություն, որով լիազորված չէ օրենքով:

Համաձայն Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի՝ պատվիրատուի ղեկավարը սահմանում է գնումների համակարգող, որը՝ եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ:

Նույն կարգավորումը սահմանված է նաև Կարգով:

Այնուամենայնիվ, ուսումնասիրելով «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության պատասխանատու պերֆուզիոլոգ Ա. Օհանջանյանի գրությունը, այն եզրակացություն անվանել չենք կարող, քանի որ այն ցանկությունների, ենթադրությունների և նպատակահարմարությունից ելնելով ներկայացված սուբյեկտիվ կարծիք է, առանց գիտական հիմնավորումների:

Այսպես,

Համաձայն Օհանջանյանի կարծիքի գտնում են, որ Horizon AF Plus օքսիգենատորի փոխարինումը Inspier 8 օքսիգենատորով բժշկական տեսանկյունից նպատակահարմար չէ: Միեւնույն ժամանակ 25 տարվա գործունեության ընթացքում հանդիպած դեպքերին է հղում անում և կարծիք է հայտնում, որ առկա չէ 8լ թողունակություն ապահովող օքսիգենատորի պահանջ:

«....Հարկ է նշել, որ նշված պարամետրերը ուղղակիորեն կապ ունեն հիվանդի քաշային կատեգորիայի հետ: Կենտրոնն իր 25 տարվա գործունեության ընթացքում ունեցել է ընդամենը 2 դեպք, երբ հիվանդի քաշը եղել է 160-165կգ տիրույթում և նշված կատեգորիայի համար ևս համապատասխանում է Horizon AF Plus օքսիգենատորը, ուստի առկա չէ 8լ թողունակություն ապահովող օքսիգենատորի պահանջ»:

Օհանջանյանի այս միտքն անուղղակիորեն հակասության մեջ է օբյեկտիվության հետ, եթե համեմատություն է անցկացնում քաշային կատեգորիայի հետ եւ հայտնում, որ ուղղակիորեն կապ ունի դրա հետ և ընդգծում, որ 25 տարվա ընթացքում 2 դեպք է եղել 160-165կգ տիրույթում, ապա 7լ եւ 8լ թողուանկության միջեւ համեմատություն չէր ներկայացվի, ինչից կարող ենք հետևություն անել, որ 7լ թողունակությամբ օքսիգենատորը չի բավարարի այն նպատակի համար, եթե հիվանդը լինի Օհանջանյանի նշած քաշային կատեգորիայում, որը չի բացառվում: Լիահույս լինենք, որ չի ստորադասվի անձի առողջությունը և կյանքը նպատակահարմարությանը:

ՈՒշագրավ հանգամանք է, ինչու է կարծիք հայտնողը համեմատություն անցկացնում հենց Horizon AF Plus օքսիգենատորի հետ, կարծես թե ցուցումից ելնելով է պերֆուզոլոգը համեմատություն անցկացնում այդ երկու ապրանքանիշերի միջև:

Կարծիք հայտնողը, երբ գնահատական է տալիս 25 տարվա կտրվածքով, հավանաբար պետք է մտաբերեր, որ շուրջ 4 տարի է Պատվիրատուն ձեռք է բերում հենց Sorin Inspier ընտանիքի օքսիգենատոր, զորօրինակ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/81 ծածկագրով ընթացակարգում հաղթող է ճանաչվել Ընկերությունը եւ 19.11.2020թ

կնքելով մատակարարման պայմանագիր մատակարարել է Sorin Inspier ընտանիքի օքսիգենատորներ:

Հավելենք, որ Պատվիրատուն շուրջ մեկ տասնամյակ ձեռք է բերում Sorin ապրանքանիշի արտադրանք:

Դիտարկենք, որ Պատվիրատուն օրենքով և իրավական այլ ակտերով լիազորված էր եզրակացություն պահանջելու ինչ-որ ապրանքատեսակի հատկանիշների վերաբերյալ, ապա եզրակացություն տրամադրելու ակնկալիքով անաչառ կլիներ, եթե եզրակացություն հայցեր անկախ փորձագետից կամ օրինակ դիմեր ՀՀ Առողջապահության նախարարությանը կամ մեկ այլ գիտական հաստատության: Այլապես ստացվում է, որ իր ենթակայության տակ գտնվող անձը հայտնում է կարծիք, այն էլ ոչ հիմնավոր և հակասական, պարզապես նպատակահարմարությունից ելնելով, միգուցե նշեր ու՞մ համար նպատակահարմար:

Եթե Պատվիրատուն վերը նշված երկու ապրանքատեսակները դիտարկում է համեմատության մեջ և անհիմն նախապատվությունը տալիս տեխնիկական բնութագրում նշված ապրանքանիշին, ապա օրենսդրի կողմից սահմանված համարժեք ապրանքով ներկայանալու հնարավորությունը դառնում է իմաստազուրկ:

Գնահատող հանձնաժողովը կարծես հակված է գործելու նպատակահարմարությունից ելնելով, մինչդեռ պարտավոր է ղեկավարվել Օրենքով և Կարգով իրեն տրված լիազորություններով:

Մասնագիտական կարծիքի 1-ին և 2-րդ կետերով վկայակոչված չափորոշիչները չեն եղել տեխնիկական բնութագրում, հետեւաբար գնահատող հանձնաժողովը հավելյալ պահանջ ներկայցնելու իրավասություն չի ունեցել:

Այն, որ տեխնիկական բնութագրով չնախատեսված չափորոշիչի վերաբերյալ կարծիք է արձանագրված եզրակացությամբ, անվիճելի է, որի մասին 20.01.2021թ № 08-48 գրության 4-րդ կետով Պատվիրատուն հիմնավորում է, մեջբերվում է «Ընդ որում մասնագիտական եզրակացությամբ համեմատումն իրականացվել է ընդհանուր, ոչ միայն հրավերով նախատեսված պարամետրերի մասով»:

Այսպիսով Պատվիրատուն հավաստում է, որ հրավերի տեխնիկական բնութագրով չնախատեսված չափորոշիչների վերաբերյալ պարզաբանում է պահանջել Մասնակցից:

Արդյո՞ք ընթացակարգը գնահատող հանձնաժողովը իրավասու է հրավերով չնախատեսված չափորոշիչների վերաբերյալ Մասնակցից հստակեցում պահանջել:

Պատվիրատուն պետք է Մասնակցի հայտը գնահատեր համարժեքության տեսանկյունից և ոչ թե՝ տեխնիկական բնութագրով ներկայացրած բոլոր չափորոշիչների բացարձակ համընկնման սկզբունքով, քանի որ համարժեք ապրանքով է մասնակցել գնման ընթացակարգին, որը ենթադրում է, որ կարող է հնարավոր անհամապատասխանություն լինի հաշվի առնելով տոկոսային հարաբերակցությունը, էական չափորոշիչների գերակշիռ առկայությունը, այլապես օրենսդրի կողմից սահմանած համարժեք ապրանքով ներկայանալու հնարավորությունը դառնում է վերացական:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց:

Արդյո՞ք անհնար է եղել ներկայացնել տեխնիկակակն բնութագիր՝ առանց հղում անելու մոդելին կամ ֆիրմային անվանմանը:

Վիճարկվող ընթացակարգով Պատվիրատուն առաջնայնություն է տվել տեխնիկական բնութագրով նշված ֆիրմային անվանմանը, քանի որ համեմատությունը այդ ապրանքատեսակի հետ է անցկացվել, մինչդեռ չափորոշիչների գնահատման համարժեքությունը պետք է դիտարկվի կարիքին համապատասխան և մատակարարվող ապրանքով նպատակային, անհրաժեշտ արդյունքն ապահովելու առաջնայնությունից ելնելով:

Այսպիսով, Պատվիրատուն ներկայացվող ապրանքի չափորոշիչների համապատասխանությունը պետք է գնահատեր համարժեքության տիրույթում և ոչ թե բացարձակ նույնականացումով:

ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20 ծածկագրով գնման ընթացակարգի հավելված 1.1-ով պատվիրատուն պահանջում է, բաց մրցույթի շրջանակում ըստ չափաբաժինների ստորեւ ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ուստի պատվիրատուի այն պահանջը, որ տեխնիկական բնութագրում շտկում կատարվի հակասում է իր հրապարակած հավելված 1.1-ին:

Եւս մեկ անգամ ընդգծենք, որ նշված ընթացակարգին մասնակցության հայտ ենք ներկայացրել համարժեք ապրանքով, հետեւաբար պատվիրատուի այն գնահատականը, որ մասնակիցը առաջարկել է հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող բնութագրով ապրանք, միտումնավոր շփոթության մեջ է գցում:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք մերժել «Մեգիէլ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/07 ընթացակարգի շրջանակներում 22.01.2021թ. ժամը 11:10-ին և 29.01.2021թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.12.2020թ. թիվ 08-505 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Մեգիէլ» ՍՊԸ-ին ներառելու նպատակով Ձեզ ենք տրամադրում հետևյալ տեղեկությունները.

Բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 26.11.2020թ. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտարարել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ): Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով նախատեսված է «Օքսիգեներատոր մեծահասակի» ապրանքը, իր համապատասխան տեխնիկական բնութագրերով: Մրցույթի նշված չափաբաժնին մասնակցել է նաև «Մեգիէլ» ՍՊԸ-ն, առաջարկելով հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող բնութագրերով ապրանք: Այնուհետև, օրենքով նախատեսված կարգով և ժամկետներում ընկերությունից պահանջվել է տեխնիկական բնութագրերի շտկում, սակայն Ընկերության ներկայացրած լրացուցիչ բնութագրերը նույնպես չեն ապահովել տեխնիկական

բնութագրերի համապատասխանությունը հրավերով նախատեսվածին: Արդյունքում Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/07 ընթացակարգի շրջանակներում 22.01.2021թ. ժամը 11:10-ին և 29.01.2021թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/07 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/07 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Մեգիէլ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.12.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է համարժեք ապրանք, որի համաձայն հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և դիմել համապատասխան ծառայությանը համարժեքության մասով մասանագիտական կարծիք ստանալու համար:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ կենտրոնի համապատասխան ծառայության կողմից ստացվել է մասնագիտական եզրակացություն, ըստ որի «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնով ներկայացված Sorin Inspire 8F մեծահասակի օքսիգեներատորի մի շարք ցուցանիշներ չեն համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին:

4. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը որոշել է օրենքով սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և տեղեկացնել Ընկերությանը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է իր կողմից ներկայացված տեխնիկական առաջարկի պարզաբանում, միաժամանակ առաջարկելով նաև Պատվիրատուին այլ մոդելի ապրանքներ, որը հիմք ընդունելով հանձնաժողովը որոշել է կրկին դիմել համապատասխան ծառայությանը համարժեքության մասով մասնագիտական կարծիք ստանալու համար:

6. Պատվիրատուի ղեկավարի՝ Մ. Ադամյանի 22.12.2020թ. թիվ 1156-1 «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21-20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով ստեղծելու մասին հրամանում փոփոխություն և լրացում կատարելու մասին, հրամանի համաձայն՝ հանձնաժողովի կազմում որպես նախագահ ընդգրկվել է պատասխանատու պերֆուզիոլոգ Արկադի Օհանջանյանը:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.12.2020թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ հիմք ընդունելով Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև բժշկական կենտրոնի համապատասխան ծառայության մասնագիտական եզրակացությունները, մերժել է Ընկերության հայտը, հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու հիմքով:

8. Սույն գործի փաստական հանգամանքների վերաբերյալ առկա է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից 29.01.2021թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 իրավապարտադիր որոշում:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.01.2021թ. թիվ 26/26-1/219-2021 գրությունը, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 29.12.2020թ. թիվ 08-505գրությունը և կից փաստաթղթերը, Ընկերության դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին,

3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով

նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Մեգիէլ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.12.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով

«Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է համարժեք ապրանք, որի համաձայն հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել, դիմել համապատասխան ծառայությանը համարժեքության մասով մասնագիտական կարծիք ստանալու համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ կենտրոնի համապատասխան ծառայության կողմից ստացվել է մասնագիտական եզրակացություն, ըստ որի «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնով ներկայացված Sorin Inspire 8F մեծահասակի օքսիգեներատորի մի շարք ցուցանիշներ չեն համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը որոշել է օրենքով սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և տեղեկացնել Ընկերությանը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է իր կողմից ներկայացված տեխնիկական առաջարկի պարզաբանում, միաժամանակ առաջարկելով նաև Պատվիրատուին այլ մոդելի ապրանքներ, որը հիմք ընդունելով հանձնաժողովը որոշել է կրկին դիմել համապատասխան ծառայությանը համարժեքության մասով մասնագիտական կարծիք ստանալու համար:

Պատվիրատուի ղեկավարի՝ Մ. Ադամյանի 22.12.2020թ. թիվ 1156-1 «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21-20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով ստեղծելու մասին հրամանում փոփոխություն և լրացում կատարելու մասին, հրամանի համաձայն՝ հանձնաժողովի կազմում որպես նախագահ ընդգրկվել է պատասխանատու պերֆուզիոլոգ Արկադի Օհանջանյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.12.2020թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ հիմք ընդունելով Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև բժշկական կենտրոնի համապատասխան ծառայության մասնագիտական եզրակացությունները, մերժել է Ընկերության հայտը, հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու հիմքով:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ սույն գործի փաստական հանգամանքների վերաբերյալ առկա է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից 29.01.2021թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/131 իրավապարտադիր որոշում, որի համաձայն՝ պարտավորեցվել է Պատվիրատուին դադարեցնելու Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին և 2-րդ կետերով կայացված որոշումները, այն հիմնավորմամբ, որ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կազմում Ա. Օհանջանյանի ընդգրկվելը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողություններն՝ Ընկերության ներկայացված հայտի գնահատման մասով, եղել են ոչ իրավաչափ, մասնավորապես՝ արձանագրվել է Կարգի 15-րդ կետի դրույթների խախտում:

Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ ***<u>Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է</u>, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:***

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 26-րդ կետի համաձայն՝ ***Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:***

Նույն կարգի 27-րդ կետի համաձայն՝ ***Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:***

Վերոնշյալ իրավական կարգավորումների և փաստական հանգամանքների հիման վրա արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած և չվերացված որոշումն ունի համապարտադիր բնույթ, իսկ նախկինում քննված՝ չվերացված որոշմամբ հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն, դրանք այն փաստական տվյալներն են, որոնք հետազոտման և գնահատման ենթակա չեն և ունեն ապացուցողական ուժ:

Այսպիսով՝ հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ իրավապարտադիր որոշմամբ արդեն իսկ դադարեցվել է ՍՑ-ՆԳ-2021/07 ծածկագրով ընթացակարգը նախաձեռնելու համար հիմք ծառայած Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումները, հետևաբար գտնում եմ, որ նման պայմաններում

հնարավոր չէ արձանագրել «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.01.2021թ. թիվ 26/26-1/219-2021 գրությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**